«ԿՈՎԿԱՍՅԱՆ ՎԱԳՐԻ» ՎԵՐԱԴԱՐՁԸ

ՄԱՍ 2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԿԱՄ ՄԻՆՉԵՎ ՈՒՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՍՑՆԵԼ «ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ԿՈՆՍԵՆՍՈՒՍԻ» ԴԵՂԱՏՈՄՍԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2025.1-5

Հիմնաբառեր. *պետության ձախողումներ, շուկայի ձախողումներ, անցումային տնտեսություն, կառավարման որակ, արդյունաբերական քաղաքականություններ*

1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին ձևավորվեց տնտեսական քաղաքականության «Վաշինգտոնյան կոնսենսուսը»՝ ազատ շուկայի վրա հիմնված, պետության նվազ մասնակցությամբ տնտեսական մոդելը, իսկ դեպի այդ մոդել տանող քաղաքականության ճշգրտումները սկսեցին որակվել որպես «կառուցվածքային բարեփոխումներ»: Այս մոդելը հիմք ընդունելով՝ 1990-ականներից մինչև 2000-ականների վերջեր զարգացող երկրներում տեղի ունեցավ տնտեսական ազատականացման մեծ ալիք: Այն ընդգրկեց նաև Հայաստանը, որտեղ գրեթե ամբողջությամբ իրականացվեցին «առաջին սերնդի» կառուցվածքային բարեփոխումները, սակայն «երկրորդ սերնդի» բարեփոխումները, այդ թվում՝ կառավարման որակին և շուկաների մրցակցությանը վերաբերող, անավարտ մնացին՝ դառնալով հաջորդ տասնամյակի տնտեսական ստագնացիայի հիմնական պատճառներից մեկը: Ըստ որոշ ցուցիչների՝ Հայաստանը կառավարման որակի հարցում էական առաջընթաց այդպես էլ չի գրանցել, ինչը լուրջ մարտահրավեր է առաջացնում դեպի «Վաշինգտոնյան նոր կոնսենսուս», այսինքն՝ արդյունաբերական քաղաքականություններով պետության արդյունավետ միջամտություն ենթադրող ազատ շուկայական տնտեսության արդյունավետ մոդելի կառուցման համար:

Նարեկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2019 թ., ավարտելով ՀՊՏՀ-ն, ընդունվել է ասպիրանտուրա: 2016-2018 թթ. եղել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, ապա փորձագետ:

Վերապատրաստումներ է անցել աշխարհի տարբեր երկրների հեղինակավոր կազմակերպություններում:

https://orcid.org/0000-0003-4978-6107

1960-ականներին Հարավային Կորեան աղքատ ագրարային երկիր էր, որի եկամտի մակարդակը զիջում էր նույնիսկ Հնդկաստանի նույն ցուցա-

նիշին՝ կազմելով վերջինիս 40%-ը: 1970-1996 թվականներին Կորեայի ՀՆԱ-ն աճեց շուրջ 10 անգամ, ինչի արդյունքում վերջինս վերածվեց արդյունաբերական, տեխնոլոգիապես առաջադեմ և եկամտի բարձր մակարդակով բնորոշվող երկրի: Սակայն, վերելքի ճանապարհին ամենևին իդեալական չէր և ուղեկցվում էր տնտեսության մենաշնորհացմամբ (օրինակ՝ պետության կողմից հովանավորվող կոնգլոմերատների՝ «չաեբոլների» ձևավորմամբ և ուժեղացմամբ), անհավասարության աճով և մակրոտնտեսական անհաշվեկշռվածությունների առաջացմամբ[1]:

Առնվազն վերջին խնդրի առումով, Կորեան միակը չէր տարածաշրջանում, ինչի հետևանքով 1997 թվականին այս անհաշվեկշռվածությունները «պայթեցին» ասիական ֆինանսական ճգնաժամով: Այսօրվա հայացքով՝ թերևս ոչինչ ավելի լավ չի նկարագրում իրավիճակի ամբողջ դրամատիզմը, քան կորեական «Դեֆոլտ» ֆիլմը[2]: Այստեղ դրաման կրկնակի է. բավական չէ, որ բառացիորեն «փլուզվում» է բարձր ֆինանսական լծակի վրա գործող տնտեսական մեխանիզմը և կառավարությունը հայտնվում է հարկաբյուջետային ճգնաժամում, «օգնության» հասած Արժույթի միջազգային հիմնադրամն էլ, իր հերթին, դեֆոլտից փրկելու դիմաց, փորձում է իր ձեռքը վերցնել երկրի մակրոտնտեսական կառավարումը և բարեփոխումների օրակարգը: Ֆիլմում այս ամենին աշխարհաքաղաքական համատեքստ է հաղորդում ԱՄՆ-ի պետքարտուղարի խորհրդանշական գաղտնի ներկայությունը, որն ուղղորդում էր բանակցությունները ԱՄՀ-ի կողմից:

Ֆիլմը, իհարկե, գեղարվեստական է՝ «համեմված» լրացուցիչ հուզականության էական չափաբաժնով: Սակայն, եթե դիմենք ստուգելի փաստերին, կարծես թե, հիմնարար հարցում այդքան էլ չի սխալվում. ԱՄՀ կայքում հասանելի՝ Կորեայի կառավարության և ԱՄՀ-ի միջև հուշագրով սահմանված տնտեսական ծրագիրն ահռելի հանձնառություն էր երկրի համար: Այսպես՝ Կորեան պարտավորվում էր անմիջապես կոշտացնել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները (բարձրացնել տոկոսադրույքը, կրճատել հարկային արտոնությունները, սուբսիդիաները և կապիտալ ծախսերը), վերակառուցել բանկային համակարգը, այդ թվում՝ լուծարելով պետական բանկերը, ազատականացնել արտաքին առևտուրը ԱՀԿ կանոններով, արտաքին ներդրողների առաջ բացել ֆինանսական շուկան, թուլացնել աշխատանքի շուկայի կարգավորումները և այլն: Այս քայլերն առաջարկվում էին որպես «կառուցվածքային բարեփոխումներ»[3]:

Վաշինգտոնյան կոնսենսուս

Կառուցվածքային բարեփոխումներն այն քաղաքականություններն են, որոնք պետք է շտկեն «պետության ձախողումները»՝ բիզնեսի համար նվազեցնելով լրացուցիչ ծախսերը և ստեղծելով ավելի լավ միջավայր: Կորեայի դեպքում դա նշանակում էր վերացնել կառավարության ավելորդ միջամտությունը տնտեսությանը, արտաքին ինտեգրման սահմանափակումները, կարգավորման դաշտի թերությունները, ինչպես նաև «մակրոպրուդենցիալ» կարգավորմամբ թույլ չտալ կրկին նման խոցելիություններ կուտակել:

Բայց սրանք ամենևին էլ առանձնահատուկ լուծումներ չէին: Բարեփոխումների նման փաթեթներ առաջարկվել էին 1980-ականներին պարտքային ճգնաժամի հորձանուտում հայտնված Լատինական Ամերիկայի, 1990-ականներին՝ հետխորհրդային և, իհարկե, 1990-ականների վերջին՝ ասիական երկրների համար:

Եթե կարճ՝ սրանք ազատ շուկայի վրա հիմնված, պետության նվազ մասնակցությամբ և հետևաբար՝ քիչ «ձախողումներով» տնտեսության մոդելի դեղատոմսերն են՝ հայտնի որպես «Վաշինգտոնյան կոնսենսուս»: Լատինական Ամերիկայի երկրների համար «Վաշինգտոնյան» ինստիտուտների՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի և ԱՄՆ

[1] Kwan Kim (1991). The Korean Miracle (1962-1980) revisited: myths and realities in strategy and development. https://kellogg.nd.edu/sites/default/files/old_files/documents/166_0.pdf
[2] Տես https://www.imdb.com/title/tt7233726/
[3] Korea—Memorandum on the Economic Program, 1997. https://www.imf.org/external/np/loi/120397.HTM

գանձապետարանի կողմից առաջարկվող բարեփոխումները ավելի ուշ հանրաճանաչ դարձած այս ձևակերպման հեղինակ Ջոն Վիլյամսոնն ամփոփում էր հետևյալ ուղղություններով[4].

1. կրճատել բյուջեի պակասուրդը,
2. վերափոխել պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ սուբսիդիաների փոխարեն՝ շեշտը դնելով սոցիալական ծառայությունների, կրթության և ենթակառուցվածքների վրա,
3. վերափոխել հարկային համակարգը՝ ընդլայնելով հարկման բազան և կրճատելով արտոնությունները,
4. ազատականացնել ֆինանսական շուկան՝ տոկոսադրույքի ազատ գնագոյացմամբ,
5. անցնել լողացող՝ շուկայի վրա հիմնված փոխարժեքի,
6. կրճատել արտաքին առևտրի սահմանափակումները,
7. վերացնել օտարերկրյա ներդրումների սահմանափակումները,
8. մասնավորեցնել պետական սեփականությամբ կազմակերպությունները,
9. վերացնել մրցակցությունը սահմանափակող կարգավորումները,
10. ապահովել սեփականության իրավունքի պատշաճ պաշտպանություն:

1990-ականներից սկսած՝ «կառուցվածքային բարեփոխումներ» հասկացությունը սկսեց նույնացվել պետական քաղաքականությունները դեպի «Վաշինգտոնյան կոնսենսուս» ճշգրտելու, այսինքն՝ կարգավորումների ազատականացման հետ: Ընդ որում, հենց 1990-ականներին սկիզբ առավ տնտեսական ազատականացման ամենամեծ ալիքը՝ շարունակվելով մինչև 2000-ականների վերջ: Ազատականացումն ընդգրկեց վարկային և տոկոսադրույքների կարգավորումների վերացումը, կապիտալի ներհոսքերի և արտահոսքերի ազատականացումը, արտաքին առևտրի մաքսատուրքերի նվազեցումը, հիմնական շուկաներում մուտքի սահմանափակումների վերացումը և պետական սեփականությամբ կազմակերպությունների մասնավորեցումը[5]: Սրանց մեծ մասը, այսպես կոչված, «առաջին սերնդի» բարեփոխումներ էին՝ հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում:

Սակայն, իրականում, նույնիսկ հիմա ոչ բոլոր զարգացող երկրներն են, որ այս «տնային աշխատանքն» ամբողջությամբ իրականացրել են: Արժույթի միջազգային հիմնադրամի՝ վերջերս իրականացրած հետազոտությունը ցույց է տվել, որ այն երկրներում, որոնք, բարեփոխումների առումով, մեծ խզվածք ունեն համադրելի երկրների համեմատ, «առաջին սերնդի» բարեփոխումների փաթեթը ՀՆԱ-ն կբարձրացնի շուրջ 8%-ով առաջիկա 4 տարում[6]:

Կառուցվածքային բարեփոխումները և դրանց խզվածքները Հայաստանում

«Առաջին սերնդի» կառուցվածքային բարեփոխումներ էին ընթանում նաև Հայաստանում՝ սկսած 1990-ականներից: Հասկանալու համար, թե երկիրը որքանով է մոտեցել «Վաշինգտոնյան կոնսենսուսին», Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (այսուհետ՝ ՎԶԵԲ)՝ այն առանցքային ինստիտուտը, որը ստեղծվել էր երկրների անցմանը դեպի շուկայական տնտեսություն հենց տեղում օժանդակելու համար, մոտ երկուսուկես տասնամյակ հրապարակում էր անցումային տնտեսության ինդեքսները, որոնք ցույց էին տալիս, թե որքանով է երկիրը մոտեցել «արդյունաբերական շուկայական տնտեսության» ստանդարտներին: Ինդեքսը չափվում է 1-ից 4 և ավելի սանդղակով, որտեղ 1-ը կոշտ պլանային տնտեսությունն է, իսկ 4-ը և ավելին՝ շուկայական տնտեսությունը: Գնահատականները տրվում էին ՎԶԵԲ տնտեսագետների կողմից:

Ինչպես կարող ենք տեսնել գծապատկեր 1-ում, Հայաստանը 1990-ականներին բավական մեծ թափով է իրականացրել շու-

[4] What is the "Washington Consensus?" Douglas A. Irwin (PIIE) and Oliver Ward (PIIE) (2021). https://www.piie.com/blogs/real-time-economic-issues-watch/what-washington-consensus

[5] IMF (2019). Reigniting Growth in Low-Income and Emerging Market Economies: What Role Can Structural Reforms Play? WEO October 2019. Chapter 3.

[6] Budina, M. N., Ebeke, C., Ebeke, M. C. H., Jaumotte, M. F., Medici, A., Panton, A. J., ... & Yao, B. (2023). Structural Reforms to Accelerate Growth, Ease Policy Trade-offs, and Support the Green Transition in Emerging Market and Developing Economies. International Monetary Fund.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ անցումը շուկայական տնտեսության



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ՝ ըստ համապատասխան ուղղությունների անցումը շուկայական տնտեսության

Ծանոթագրություն: *Գծապատկեր 1-ում ՎԶԵԲ անցումային տնտեսության ինդեքսների միջին արժեքներն են, իսկ գծապատկեր 2-ում՝ ՎԶԵԲ անցումային տնտեսության ինդեքսները՝ 2014 թվականի համար:*

Աղբյուրը՝ *https://www.ebrd.com/economic-research-and-data/transition-qualities-asses.html և հեղինակի հաշվարկներ:*

կայական տնտեսությանն անցման բարեփոխումները: Արդեն 1996 թվականին բարեփոխումների միջին գնահատականը բարձր է եղել տարածաշրջանի երկրների միջին ցուցանիշից և համադրելի՝ զարգացող եվրոպական երկրների հետ: Հաջորդող տարիներին Հայաստանը, զարգացող եվրոպական երկրների հետ գրեթե համաքայլ, ավելի ու ավելի է «մոտեցել» «Վաշինգտոնյան կոնսենսուսին»՝ զգալիորեն գերազանցելով տարածաշրջանի միջին ցուցանիշը (պետք է նշել, որ Հայաստանի ցուցանիշի հետ համադրելի է նաև Վրաստանի ցուցանիշը):

Եթե անցումային բարեփոխումները դիտարկենք ըստ ուղղությունների, կտեսնենք, որ 6 բաղադիչներից 4-ի պարագայում Հայաստանը հասել է «արդյունաբերական շուկայական տնտեսության» ստանդարտին, մինչդեռ երկուսի դեպքում՝ կորպորատիվ կառավարում և մրցակցային քաղաքականություն, հետ է մնում: Ընդ որում, այս ուղղություններում զարգացող եվրոպական երկրները թեև առաջ են անցել Հայաստանից, դեռևս հեռու են սահմանված նշաձողից: Կորպորատիվ կառավարման դեպքում այդ նշաձողը համապատասխանում է ֆինանսական շուկաների մեխանիզմով՝ մեծ թվով ներդրողների կողմից կառավարմանը, իսկ մրցակցային քաղաքականության դեպքում՝ շուկաների մեծ մասում առանց սահմանափակումների մուտքի հնարավորությանը:

Այսպիսով, անցումային տնտեսության ինդեքսների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանն իրականացրել էր ակնկալվող՝ ***«առաջին սերնդի» կառուցվածքային բարեփոխումների*** մեծ մասը: Այս արձանագրմանն ենք հանդիպում նաև Համաշխարհային բանկի «Կովկասյան վագրը. հարատևելով տնտեսական աճը Հայաստանում» հետազոտության մեջ:

«.... կարևոր ինստիտուցիոնալ միջոցառումներ են իրականացվել՝ ապահովելու ազատ գնագոյացումը, առևտուրը և ներդրումները, ակտիվների մասնավոր սեփականությունը և կազմակերպությունների վերակառուցումը... Այսպիսով, առաջին սերնդի կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումներն իրականացվել են և հիմք դրել տպավորիչ տնտեսական աճի համար»[7]:

[7] Mitra, S. (2007). The Caucasian tiger: sustaining economic growth in Armenia. World Bank Publications., էջ 22:

Այնուամենայնիվ, հետազոտությունը շեշտում էր նաև, որ բարեփոխումներն անավարտ են, և «երկրորդ սերնդի» բարեփոխումները չիրականացնելու դեպքում բարձր աճի տեմպերը հնարավոր չի լինի պահպանել:

Այդ բարեփոխումներում առաջնահերթ էին համարվում կառավարման որակը, մրցակցությունը և ֆինանսական միջնորդությունը: Հետազոտության մեջ առանձնացվում էին տվյալ ժամանակին հատուկ շատ ուշագրավ այլ հիմնախնդիրներ ևս. օրինակ՝ իշխանություններին մոտ կանգնած գործարարների կողմից առանձին ոլորտներում մենաշնորհային դիրքի ձեռքբերումը, հեռահաղորդակցության անբավարար որակը, թերզարգացած ֆինանսական ծառայությունները, օրենքի գերակայության ապահովման հիմնախնդիրները, հարկային և մաքսային մարմիններում առկա կոռուպցիան և այլն:

Եվ, իրոք, պատմությունը ցույց տվեց, որ այս արձանագրումը ճիշտ էր: 2009 թվականին հաջորդող տասնամյակում տնտեսական աճի մակարդակը նվազեց՝ ավելի ցածր լինելով զարգացող երկրների միջին ցուցանիշներից, ինչը թուլացրեց տնտեսության ներուժն ու դիմադրողականությունը: Տնտեսությունն այդպես էլ չգրտավ արտադրողականության բարձրացման ու առողջ աճի բանաձևը, իսկ տնտեսական աճը շարունակեց առաջ քարշվել պահանջարկով՝ արտաքին դրական շոկերով կամ վարկային «բումերով»:

Հետազոտությունում նշվող «երկրորդ սերնդի» բարեփոխումները խտանում են կառավարման որակի մեջ: Գնահատումները ցույց են տալիս, որ կառավարման որակը բարձրացնող էական կառուցվածքային բարեփոխումների փաթեթը 4 տարվա հորիզոնում կարող է ապահովել ՀՆԱ 3-4% աճ: Կառավարման որակի ուղղությամբ առաջընթացը նաև բազմապատկում է մյուս ուղղություններով բարեփոխումների ազդեցությունը[8]:

Կառավարման որակի լավագույն ցուցիչ ընդունված է համարել համաշխարհային բանկի «Համաշխարհային կառավարման ինդեքսը» (Worldwide Governance Indicators): Վերջինս կառավարման որակը սահմանում է հետևյալ կերպ.

«Կառավարման որակն արտահայտվում է այն ավանդույթներով և ինստիտուտներով, որոնց միջոցով երկրում իրացվում է իշխանությունը: Դրանք ընդգրկում են այն գործընթացները, որոնցով իշխանություններն ընտրվում են, մշտադիտարկվում և փոխարինվում: Միաժամանակ, այն վերաբերում է կառավարության՝ արդյունավետորեն քաղաքականություններ մշակելու և իրականացնելու կարողությանը»:

Կառավարման որակի առումով, Համաշխարհային բանկի «մարգարեական» արձանագրումից հետո առաջընթացը շատ էական չէ. ցուցիչը շարունակում է գտնվել բացասական տիրույթում՝ փոքր բարելավում ունենալով: Ճիշտ է, այն տարածաշրջանում համեմատաբար բարվոք է, սակայն զգալիորեն զիջում է ոչ միայն Արևելյան Եվրոպայի երկրների, այլև Վրաստանի ցուցանիշին:

Ընդ որում, բացի հաշվետվողականությունից և կարգավորումների որակից, Հայաստանը զիջում է Վրաստանին բոլոր մյուս ուղղություններով: Հատկապես զգալի են խզվածքները համադրելի երկրներից կառավարության արդյունավետության և օրենքի գերակայության ապահովման ուղղություններով: Առաջինը չափում է, թե որքանով է պետությունը որակյալ հանրային ծառայություններ մատուցում քաղաքացիներին, որքան որակյալ են մշակվում պետական քաղաքականությունները և որքանով է դրանց իրականացման նկատմամբ կառավարությունը պահպանում իր հանձնառությունը: Օրենքի գերակայությունը վերաբերում է պայմանագրերի կատարմանը, սեփականության իրավունքի պաշտպանությանը, իրավապահ համակարգի և դատարանների գործունեությանը:

Այս ուղղություններով առկա խզումները, ըստ էության, պետության ձախողումներն են, որոնք, իրենց հերթին, արգելակում են շուկայական տնտեսության արդյունավետ գործունեությունը: Դրանք մեծացնում են գործարարությամբ զբաղվելու ծախսերը՝

[8] Budina, M. N., Ebeke, C., Ebeke, M. C. H., Jaumotte, M. F., Medici, A., Panton, A. J., ... & Yao, B. (2023). Structural Reforms to Accelerate Growth, Ease Policy Trade-offs, and Support the Green Transition in Emerging Market and Developing Economies. International Monetary Fund.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող կառավարման ցուցիչների միջինը Հայաստանում և Վրաստանում



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող կառավարման ցուցիչները Հայաստանում և տարածաշրջանում, 2023 թ. տվյալներ

Աղբյուրը՝ *https://www.worldbank.org/en/publication/worldwide-governance-indicators և հեղինակի հաշվարկներ:*

հանգեցնելով ավելի բարձր ռիսկի, հավելավճարների և տոկոսադրույքների: Հավելենք՝ մեր գնահատումները ցույց են տվել, որ եթե Հայաստանը փակի Վրաստանի համեմատ կառավարման որակի գնահատվող խզվածքը, միջնաժամկետ հատվածում յուրաքանչյուր տարի կգեներացնի լրացուցիչ 0.4%-ային կետ տնտեսական աճ[9]:

Կառուցվածքային բարեփոխումները «համադարման» չեն կամ «Վաշինգտոնյան նոր կոնսենսուսը»

Հարավային Կորեան մեկ ձեռքի մատների վրա հաշվվող այն երկրներից մեկն է, որը կարողացել է «աղքատ» (բնակչության մեկ շնչի հաշվով ցածր-եկամտային) երկրի կարգավիճակից անցնել «զարգացած» (բարձր-եկամտային) երկրի կարգավիճակի: Բայց ինչպե՞ս է ստացվում, որ «Հան գետի հրաշքը», ինչպես երբեմն անվանում են 1960-1990-ականներին Կորեայի գրանցած հաջողությունը, այդքան մեծ ճշգրտումների կարիք ուներ 1997 թ.: Այլ կերպ ասած՝ ինչպե՞ս էր երկիրը տնտեսական թռիչք ունեցել՝ առանց «գերազանց» ստանալու կառուցվածքային բարեփոխումների հարցում:

Իրականում այս հարցի պատասխանը միանշանակ չէ և տնտեսական զարգացման թեմայով ամենամեծ բանավեճերից մեկն է: Տեսակետների ամենաուշագրավ բախումներից մեկը հենց Համաշխարհային բանկի՝ մի քանի տարվա տարբերությամբ հրապարակված երկու տարբեր հետազոտություններում հանդիպող՝ երբեմն հակադիր մոտեցումներն են: Այսպես՝ 1987 թվականին Համաշխարհային բանկը Համաշխարհային զարգացման զեկույցում Արևելյան Ասիայի երկրների տնտեսական հաջողությունն ավելի շատ բացատրում էր ազատ առևտրի և շուկաների գործոնով, իսկ պետության դերն ավելի շատ ընդգծվում էր մակրոտնտեսական կայունության ապահովման, կրթության, ենթակառուցվածքների, որակյալ պետական կարգավորումների և ստանդարտների, գիտական հետազոտությունների առաջմղման հարցում: Միաժամանակ, արտաքին առևտրում հովանավորչությունը, ոլորտային սուբսիդիաներն ու արտոնությունները դիտվում էին որպես առավե-

[9] Gigineishvili, M. N., Teodoru, I. R., Karapetyan, N., Ustyugova, M. Y., van Houtte, M. J., Jonas, J., … & Brollo, F. (2023). Paving the Way to More Resilient, Inclusive, and Greener Economies in the Caucasus and Central Asia. International Monetary Fund.

լապես անարդյունավետ և շուկայական մեխանիզմը խաթարող միջամտություններ[10]:

Մինչդեռ արդեն 1993 թվականին լույս տեսած «Արևելյան Ասիայի հրաշքը» հետազոտությունում[11] պետության դերի մասին շեշտադրումներն արդեն փոխվում են. «…. բայց այս հիմնարար քաղաքականությունները չեն արտահայտում ամբողջական պատմությունը: Այս երկրների մեծ մասում այս կամ այն կերպ կառավարությունը միջամտել է համակարգային ձևով և տարբեր ուղիներով՝ խթանելու զարգացումը և որոշ դեպքերում՝ հատուկ ոլորտների զարգացումը: Միջամտությունները տեղի են ունեցել տարբեր ձևերով. թիրախավորված սուբսիդավորվել են վարկերն ընտրված ոլորտների համար, ավանդների տոկոսադրույքը պահվել է ցածր մակարդակում և վարկավորման տոկոսադրույքների համար առաստաղներ են սահմանվել, օժանդակվել է ներմուծման փոխարինումը, սուբսիդավորվել են անկում գրանցող ոլորտները, ստեղծվել են պետական բանկեր, իրականացվել են պետական ներդրումների կիրառական հետազոտություններ, սահմանվել են արտահանման թիրախներ»:

Արդյունավե՞տ էին, արդյոք, նման միջամտությունները: Զեկույցը եզրակացնում է, որ Արևելյան Ասիայի մի շարք երկրներում պետության միջամտությունը հանգեցրել է ավելի բարձր ու ներառական աճի, քան կգրանցվեր առանց դրա: Սակայն, զեկույցը պնդում է, որ դրա համար անհրաժեշտ են մի քանի նախապայմաններ: Նախ՝ անհրաժեշտ է ստեղծել ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան սահմանելու հստակ կատարողականի չափանիշներ ընտրանքային միջամտությունների և արդյունքների մոնիթորինգի համար: Արևելյան Ասիայի որոշ երկրներում պետության միջամտությունները եղել են «անսովոր ձևով կարգապահ և կատարողականի վրա հիմնված»: Ապա պետական միջամտության ծախսերը չպետք է դառնան ավելցուկային: Օրինակ՝ Կորեայում, երբ պետության միջամտությունը սկսել է վտանգել հարկաբյուջետային կայունությունը, կառավարությունը հրաժարվել է դրանից:

Այս զեկույցներից ավելի քան 3 տասնամյակ անց արդեն Արժույթի միջազգային հիմնադրամն է գրում, որ արդյունաբերական քաղաքականություններն ամենուրեք վերադարձել են օրակարգ, և դրանք կարող են արդյունավետ լինել: Համավարակը, աշխարհաքաղաքական առճակատումները և կլիմայական փոփոխությունների հետևանքները մեծացնում են անհանգստությունները մատակարարման շղթաների դիմակայունության, տնտեսական անվտանգության ապահովման և ընդհանրապես՝ ռեսուրսներն արդյունավետորեն բաշխելու շուկայի կարողության հանդեպ (հատկապես՝ նշված մարտահրավերների համատեքստում): Արդյունքում և՛ զարգացած, և՛ զարգացող երկրները սկսել են էլ ավելի շատ շեշտը դնել թիրախային միջամտությունների վրա, որոնք թիրախավորում են «շուկայի ձախողումների» վերացումը[12]:

«Շուկայի ձախողումները» շտկելուն և արդյունաբերական քաղաքականություններին դեռևս կանդրադառնանք մեր հոդվածաշարում: Այդուհանդերձ, անգամ պարզ տրամաբանությունը հուշում է, որ միամտություն է կարծել, որ առանց «պետության ձախողումները» շտկելու կարելի է հավակնել շտկելու «շուկայի ձախողումները»:

Այսպես, օրինակ, առանց ճիշտ չափաբերելու թիրախային միջամտությունները, առանց մշտադիտարկման և արդյունավետության գնահատման կարողություններ ձևավորելու՝ իմաստ չունի մտածել, որ պետական ինստիտուտները պետք է տընտեսությունն ուղղորդեն «օպտիմալ կառուցվածքի»: Մյուս կողմից, ավելցուկային պետական կարգավորումները կամ մրցակցության սահմանափակումները թույլ չեն տա շուկայի ուժերին արդյունավետո-

[10] World Bank. (1987). World Development Report 1987: Barriers to Adjustment and Growth in the World Economy; Industrialization and Foreign Trade; World Development Indicators.

[11] World Bank (1993). The East Asian miracle: economic growth and public policy: Main report (English). A World Bank policy research report Washington, D.C.

[12] Industrial Policy is Back But the Bar to Get it Right Is High. Anna Ilyina, Ceyla Pazarbasioglu, Michele Ruta. April 12, 2024, IMF Blog, https://www.imf.org/en/Blogs/Articles/2024/04/12/industrial-policy-is-back-but-the-bar-to-get-it-right-is-high

րեն արձագանքել պետության ազդակներին, և անգամ ճիշտ չափաբերված արդյունաբերական քաղաքականությունները կարող են հանգեցնել շուկայական ուժերի խեղաթյուրման, ռեսուրսների վատնման և ֆիսկալ անկայունության:

Թերևս, սխալ չէ պնդել, որ «Վաշինգտոնյան կոնսենսուսը» որոշակիորեն ձևափոխվել է՝ ավելի լայն տեղ տալով պետության մասնակցությանն ու հատկապես՝ արդյունաբերական քաղաքականություններին: Սակայն, այդ «Վաշինգտոնյան նոր կոնսենսուսը» պահանջում է շատ ավելի մեծ կարողություններ ունեցող պետական համակարգ՝ երաշխավորելու պետության միջամտության արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունը և անխափան գործունեությունը, ինչպես նաև դրանցից բխող հարկաբյուջետային ռիսկերի կառավարումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Budina, M. N., Ebeke, C., Ebeke, M. C. H., Jaumotte, M. F., Medici, A., Panton, A. J., ... & Yao, B. (2023). Structural Reforms to Accelerate Growth, Ease Policy Trade-offs, and Support the Green Transition in Emerging Market and Developing Economies. International Monetary Fund.
2. Gigineishvili, M. N., Teodoru, I. R., Karapetyan, N., Ustyugova, M. Y., van Houtte, M. J., Jonas, J., ... & Brollo, F. (2023). Paving the Way to More Resilient, Inclusive, and Greener Economies in the Caucasus and Central Asia. International Monetary Fund.
3. IMF (2019). Reigniting Growth in Low-Income and Emerging Market Economies: What Role Can Structural Reforms Play? WEO October 2019. Chapter 3.
4. Industrial Policy is Back But the Bar to Get it Right Is High. Anna Ilyina, Ceyla Pazarbasioglu, Michele Ruta. April 12, 2024, IMF Blog, https://www.imf.org/en/Blogs/Articles/2024/04/12/industrial-policy-is-back-but-the-bar-to-get-it-right-is-high.
5. Korea—Memorandum on the Economic Program, 1997. https://www.imf.org/external/np/loi/120397.HTM
6. Kwan Kim (1991). The Korean Miracle (1962-1980) revisited: myths and realities in strategy and development. https://kellogg.nd.edu/sites/default/files/old_files/documents/166_0.pdf
7. Mitra, S. (2007). The Caucasian tiger: sustaining economic growth in Armenia. World Bank Publications.
8. What is the “Washington Consensus?” Douglas A. Irwin (PIIE) and Oliver Ward (PIIE) (2021). https://www.piie.com/blogs/realtime-economic-issues-watch/what-washington-consensus
9. World Bank (1993). The East Asian miracle: economic growth and public policy : Main report (English). A World Bank policy research report Washington, D.C.
10. World Bank. (1987). World Development Report 1987: Barriers to Adjustment and Growth in the World Economy; Industrialization and Foreign Trade; World Development Indicators.

НАРЕК КАРАПЕТЯН
Преподаватель АГЭУ, кандидат экономических наук

ПУЛЬС ЭКОНОМИКИ

ВОЗВРАЩЕНИЕ «КАВКАЗСКОГО ТИГРА» ЧАСТЬ 2. СТРУКТУРНЫЕ РЕФОРМЫ, ИЛИ КУДА НАС МОЖЕТ ПРИВЕСТИ «ВАШИНГТОНСКИЙ КОНСЕНСУС»?

В конце 1980-х - начале 1990-х годов был сформирован «Вашингтонский консенсус» экономической политики — экономическая модель, основанная на свободном рынке, с минимальным вмешательством государства, а корректировки политики в сторону этой модели стали квалифицироваться как «структурные реформы». На основе этой модели в развивающихся странах с 1990-х до конца 2000-х годов произошла мощная волна экономической либерализации. В него вошла и Армения, где структурные реформы «первого поколения» были практически полностью реализованы, однако реформы «второго поколения», в том числе связанные с качеством управления и рыночной конкуренцией, остались незавершенными, что стало одной из главных причин экономической стагнации в следующем десятилетии. По некоторым показателям, Армения до сих пор не достигла существенного прогресса в качестве государственного управления, что представляет собой серьезную проблему для перехода к «новому Вашингтонскому консенсусу», то есть построению эффективной модели свободной рыночной экономики, которая предполагает вмешательство государства с промышленной политики.

Ключевые слова: *провалы государства, провалы рынка, переходная экономика, качество управления, промышленная политика*

NAREK KARAPETYAN
Lecturer at ASUE, PhD in Economics

PULSE OF ECONOMY

THE RETURN OF THE “CAUCASIAN TIGER” PART 2. STRUCTURAL REFORMS, OR WHERE CAN THE “WASHINGTON CONSENSUS” BRING US?

In the late 1980s and early 1990s, the “Washington Consensus” of economic policy was formed - an economic model based on a free market, with minimal state intervention, and policy adjustments towards this model began to be qualified as “structural reforms”. Based on this model, a great wave of economic liberalization took place in developing countries from the 1990s to the late 2000s. It also included Armenia, where the “first generation” structural reforms were almost completely implemented, but the “second generation” reforms, including those related to the quality of governance and market competition, remained incomplete, becoming one of the main reasons for economic stagnation in the next decade. According to some indicators, Armenia has not made significant progress in the quality of governance till now, which poses a serious challenge for the transition to the “new Washington consensus”, that is, the construction of an effective model of a free market economy that assumes state intervention with industrial policies.

Keywords: *state failures, market failures, transition economy, quality of governance, industrial policies*